մաս սովորող սփյուռքահայ երիտասարդները, որոնք ստանում են ամենաբարձր թոշակը։

Ինստիտուտը ուսանողներին անվճար տրամադրում է ներկեր, կտավ, ինչպես և ապահովում է բոլոր ներկայացումները անհրաժեշտ նյութերով։ Բավական է նշել, որ ավարտական կուրսերի բոլոր ուսանողներին հնարավորություն է տրվում մեկ ամսով լինել Մոսկվայում, Լենինգրադում, Ռիգայում, որտեղ նրանք անց են կացնում իրենց ստեղծագործական պրակտիկան։

Գեղարվեստա-թատերական ինստիտուտը ունի կադրերի պատրաստման մեծ և պատասխանատու ծրագիր։ Այս ուսումնական տարվանից սկսած տարին կերպավ պատրաստվելու են ռեժիսյորական կադրեր։ Պատրաստվելու են նաև մասնագետներ գործադրական, կերամիկական և մանվածքային արդյունաբերության համար։ Ուսուցումը կյանքի և արտադրության հետ շաղկապելու նշանակով Գեղարվեստա-թատերական ինստիտուտը բոլոր հնարավորությունները կօգտագործի ապահովելու արվեստի լիարժեք կադրերի պատրաստման գործը։

Ա. ԳԱՆԻԿՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ

Հայկական երաժշտական կուլտուրան երբեք չի ապրել ծաղկման ու զարգացման այնպիսի բուռն շրջան, ինչպիսին ապրել է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Անցած քառասուն տարիների ընթացքում սովետահայ երաժշտությունը հասել է այնպիսի բարձունքների, որ իրավամբ իր աչքի ընկնող տեղն է գրավել թե մեր Սովետական մեծ Հայրենիքի եղբայրական ռեսպուբլիկաների երաժշտական կուլտուրաների շարքում և թե համաշխարհային երաժշտության մեջ։

Սովետահայ երաժշտական կուլտուրայի այդ հսկայական վերելքը անհնարին է պատկերացնել առանց Երևանի Պետական կոնսերվատորիայի գոյության, որը 1946 թ. կրում է հանճարեղ Կոմիտասի անունը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց մի քանի ամիս հետո, կառավարության հատուկ որոշմամբ Երևանում կազմակերպվեց երաժշտական ստուդիա, որը հայ երաժշտության պատմության մեջ առաջին երաժշտական ուսումնական հաստատությունն էր։

Հայտնի է, որ հայ մտավորականությունը, այդ թվում և փոքրաթիվ հայ պրոֆեսիոնալ երաժիշտները, ռևոլյուցիայից առաջ մեծ մասամբ ապրում և գործում էին Հայաստանի սահմաններից դուրս՝ Հայաստանում գործունեության ասպարեզ չգտնելու պատճառով։ Երաժշտական ստուդիայի կազմակերպումը մի շարք հայ երաժիշտների համար Երևան տեղափոխվելու խթան հանդիսացավ։ Ականավոր հայ կոմպոզիտոր, տաղանդավոր խմբավար, խոշոր երաժշտական-հասարակական գործիչ և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանի գլխավորությամբ նրանք իրենց վրա վերցրին Հայաստանում պրոֆեսիոնալ երաժշտական կուլտուրայի պատրաստման ու տարածման բարձր ու ազնիվ միսիան։ Դրանց թվում էին Արուս Բաբայանը (մեներգեցողության դասատու), Աննա Մնացականյանը և Հովսեփ Մաղաթյանը (մասնագիտական դաշնամուրի դասատուներ), Ալեքսանդր Հակոբյանը (ընդհանուր դաշնամուրի դասատու, այժմ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս), Լ. Միրզա-Ավագյանը (ջութակի դասատու) և Ավետիքյանը (թավջութակի դասատու)։

Երաժշտական ստուդիայի բացումը կապված էր չափազանց մեծ դժվարությունների հետ։ Առաջին իմպերիալիստական պատերազմը և դաշնակցականների տիրապետության տարիները Հայաստանը հասցրել էին տնտեսական ու կուլտուրական անկման ծայր աստիճանի։ Այդ ծանր ժամանակաշրջանում շատ դժվար էր կահավորել ստուդիայի շենքը, ձեռք բերել դաշնամուրներ ու ջութակներ, ալտեր, թավջութակներ, կոնտրաբասներ և այլ երաժշտական գործիքներ, ուսման պրոցեսի համար անհրաժեշտ նոտաներ և հաղթահարել չնախատեսված ու աներևակայելի շատ ու շատ խոչընդոտներ։

Չնայած դրան, 1921 թ. դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ երաժշտական ստուդիայի հանդիսավոր բացումը։ Երաժշտական ստուդիան դարձավ ռեսպուբլիկայի առաջին ու միակ երաժշտական օջախն ու կենտրոնը, որն իր վրա վերցրեց թե՛ երաժշտական կրթության և թե՛ երաժշտական լուսավորական աշխատանքների դժվարին և պատասխանատու պարտավորությունը։ Մի կողմից նա պետք է համապատասխան երաժշտական կրթություն ունեցող կադրեր պատրաստեր հետագայում նախատեսվող բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատության՝ կոնսերվատորիայի համար, մյուս կող-

միջ պիտի կազմակերպեր ու գլխավորեր թե՛ Երևան քաղաքի և թե՛ շրջանների համերգային կյանքը, աշխատավորական լայն մասսաներին ծանոթացնելով ու նրա սեփականությունը դարձնելով հայկական, ռուսական և արևմտաեվրո-

մասսայական գյուղերի երգ-երաժշտության ապագա դասատուներին ձեռք բերել խմբական երգեցողության ու խմբավարության պրոֆեսիոնալ ունակություններ, փորձ ու հմտություն։ Երգեցիկ խմբի հետ պարապում էր խմբավա-

Կոնսերվատորիայի մի խումբ դասատուներ. Ձախից աջ՝ Ա. Մանդատրյան (տրոմբոն), Մ. Ասոյան (հոբոյ), Ա. Տեր-Ղևոնդյան (տեսական առարկաներ), Կ. Սարաջյան (դիրիժորություն), Օ. Բարսայան (դաշնամուր), Գ. Բուդաղյան (դիրիժոր) և Ա. Դոլզան (կլարնետ):

պական դասական երաժշտության լավագույն նմուշները։ Վերջապես, նա պետք է ամենայն ուշադրությամբ զբաղվեր ռեսպուբլիկայի մասսայական գյուղերում սովորող մանուկ սերնդի երաժշտական դաստիարակության կարևորագույն գործով։

Առաջին ուսումնական տարում հնարավոր եղավ բացել դաշնամուրի, ջութակի, թավջութակի և մեներգեցողության դասարաններ, որտեղ սովորում էին 12 աշակերտներ։ Բացի մասնագիտությունից, նրանք սովորում էին ռիթմիկա և երաժշտական գրագիտություն, երաժշտական տարրական տեսություն, սոլֆեջիո, իսկ մեկ տարի հետո՝ նաև հարմոնիա։ Տեսական առարկաներն ավանդում էր Ռոմանոս Մելիքյանը։

Հենց առաջին տարվանից ստուդիայում կազմակերպվեց բազմաձայն երգեցիկ խումբ։ Այդ երգչախումբը հնարավոր էր դարձնում ստուդիայի աշակերտությանը ծանոթացնել բազմաձայն երգեցողության հետ, կազմակերպել համերգներ երաժշտական հասարակայնության և քաղաքի ու շրջանի աշխատավորության համար։ Երգեցիկ խումբը հնարավորություն էր տալիս

րական արտակարգ շնորհքով օժտված «Մաէստրո» Ռոմանոս Մելիքյանը (ինչպես կոչում էին նրան ստուդիայի բոլոր աշակերտները)։ Նա երգչախմբի հետ անցնում էր հայկական, ռուսական և արտասահմանյան կլասիկների լավագույն խմբական ստեղծագործությունները։

Աշակերտության երաժշտական և ընդհանուր մտահորիզոնը ընդլայնելու նպատակով, ստուդիայի դասատուների ուժերով սիստեմատիկաբար կազմակերպվում էին դասախոսություններ ու համերգներ՝ նվիրված Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Չայկովսկու, Գրիգի, Կոմիտասի, Լեոնարդո դա Վինչիի, Ռաֆայելի և երաժշտության ու արվեստի այլ ճյուղերի ուրիշ հանճարների կյանքին ու ստեղծագործությանը։ Այդ դասախոսություններին ու համերգներին, բացի ստուդիայի աշակերտներից ու դասատուներից, համարյա միշտ ներկա էին լինում արվեստասեր հյուրեր, գլխավորապես համալսարանի դասախոսներից։ Ի դեպ, պետք է ասել, որ առաջին տարում հնարավոր չեղավ ստուդիայի դասասենյակները ապահովել անհրաժեշտ քանակի աթոռներով, և որպեսզի ստուդիայի աշա-

կերտները խմբական պարապմունքներին, երգչախմբի փորձերին ու համերգներին հնարավորություն ունենային նստելու, նրանցից յուրաքանչյուրը տնից մեկական աթոռ էր բերել։ Համերգների օրերին ստուդիայի ղեկավարությունը ստիպված էր լինում հանձնարարել այդ նույն աշակերտներին՝ մեկ երեկոյի համար լրացուցիչ աթոռներ բերել հյուրերի համար։

Բացի ստուդիայի ներսում կազմակերպված համերգներից, համերգներ էին կազմակերպվում նաև Երևան քաղաքի և մասամբ շրջանների աշխատավորության համար, որոնց վրա այդ համերգները մեծ ազդեցություն էին թողնում։ 1922 և 1923 թթ. ամռան ամիսներին ստուդիայի մեծահասակ աշակերտներից բրիգադներ ուղարկվեցին Հայաստանի մի քանի շրջկենտրոններ, որտեղ նրանք շրջանի մասսայական դրպրոցների երգ-երաժշտության դասատուներին սովորեցրին բարձր գեղարվեստական արժեք ունեցող մոտ 25 մանկական երգեր (այդ թվում՝ երկու, երեք և չորս ձայների համար գրված մի քանի կանոններ) առաջիկա ուսումնական տարիներում շրջանի դպրոցականներին սովորեցնելու համար։ Ստուդիայի մեծահասակ աշակերտների մեծ մասը աշխատում էր Երևանի մասսայական դպրոցներում, որպես երգ-երաժշտության դասատուներ ու խմբավարներ։

Երկու ոչ լրիվ ուսումնական տարիների ընթացքում ստուդիայի աշակերտության մի մասը ցուցաբերեց այնպիսի մեծ առաջադիմություն, որ 1923—1924 ուսումնական տարուց հնարավոր եղավ բացել Կոնսերվատորիայի (բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություն) մի քանի դասարաններ։ Կոնսերվատորիան երկար տարիների ընթացքում հանդիսացել է մի ուսումնական հաստատություն, որն իր մեջ միավորել է թե տարրական, թե միջնակարգ և թե բարձրագույն երաժշտական կրթությունը։

Այդ յուրօրինակ երաժշտական կոմբինատում տարեցտարի ավելանում էր աշակերտների, ուսանողների, դասատուների, ինչպես նաև ավանդվող մասնագիտությունների ու առարկաների թիվը։ Եվ եթե երաժշտական ստուդիայի հիմնադրման առաջին տարում կային միայն դաշնամուրի, ջութակի, թավջութակի ու մեներգեցողության դասարաններ, ապա հաջորդ տարիներին բացվեցին նաև ալտի, կոնտրաբասի, ֆլեյտայի, հոբոյի, կլարնետի, ֆագոտի, վալտորնայի, տրուբայի, տրոմբոնի, տուբայի, հարվածային գործիքների, տավիլի, դիրիժորության, խմբավարության, երաժշտագիտության և կոմպոզիցիայի դասարաններ։

1922—1923 ուս. տարում ստուդիայում դասավանդելու համար հրավիրվեցին ջութակահարներ Ավետ Դաբրիելյանը (այժմ ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ, Կոմիտասի անվան կվարտետի առաջին ջութակահար) և Դավիթ Սողոմոնյանը, Ե. Ի. Խանկալամյանը (դաշնամուրի դասատու) և Վ. Ա. Շպերլինգը, որին հանձնարարված էր դասավանդել մի շարք մասնագիտություններ (կոնտրաբաս, ֆլեյտա, հոբոյ, վալտորնա և այլ պղնձյա ու փայտյա փողային գործիքներ)։

Կոնսերվատորիայի բացումը ևս մի շարք երաժիշտների Երևան գալու նոր խթան հանդիսացավ։ Դրանց թվում էին հայ խոշոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, ականավոր երաժշտագետ Վ. Դ. Ղորղանյանը, կոմպոզիտոր Ասուշավան Տեր-Ղևոնդյանը (այժմ ժողովրդական արտիստ, երաժշտության տեսության և կոմպոզիցիայի ամբիոնի պրոֆեսոր), երաժշտագետներ Արշակ Ադամյանը և Օվսաննա Տեր-Գրիգորյանը, երաժշտագետ և կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանը, կոմպոզիտոր Միքայել Միրզոյանը, թավջութակահարներ Արտեմի Այվազյանը (այժմ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր) և Միքայել Մալունցյանը (այժմ ժողովրդական արտիստ, դիրիժոր, լարային գործիքների ամբիոնի վարիչ), ջութակահար Հովհաննես Հովհաննիսյանը, հայտնի քյամանչիստ-վիրտուոզ Սաշա Օգանեզաշվիլին (Ս. Հովհաննիսյանը), դիրիժոր Սուրեն Չարեքյանը (այժմ ժողովրդական արտիստ, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնի գլխավոր դիրիժոր և Կոնսերվատորիայի օպերային դասարանի դոցենտ), դաշնակահարներ Ե. Ա. Խոսրովյանը (հետագայում դոցենտ, այժմ թոշակառու) և Օլգա Բարասյանը (այժմ արվեստի վաստակավոր գործիչ, Կոնսերվատորիայի ընդհանուր դաշնամուրի ամբիոնի վարիչ, դոցենտ), մեներգեցողության դասատուներ Ա. Ս. Աբրահամյանը, Մելիքսեթյանը, Մ. Լ. Գյանջյանը, Ն. Ա. Կագարյանը, Ս. Բարխուդարյանը, ալտի դասատու Ա. Ա. Կոտլյարևսկին, վալտորնայի դասատու Շադուրոն, հոբոյի դասատու Բ. Բ. Ֆեոդորովը, կլարնետի դասատու Ս. Մ. Դովգանը (այժմ վաստակավոր արտիստ, թոշակառու), տրոմբոնի դասատու Արամ Մանգասարյանը (այժմ վաստակավոր արտիստ, թոշակառու) և ուրիշներ։

1924—1925 ուսումնական տարին նշանավորվեց սիմֆոնիկ նվագախմբի կազմակերպմամբ, որը ղեկավարում էին Կոնսերվատորիայի նոր դիրեկտոր Արշակ Ադամյանը և նվագախմբային աշխատանքի մեծ փորձ ունեցող,

ջութակի դասատու Հ. Հովհաննիսյանը։ Վերջինս միևնույն ժամանակ հանդիսանում էր նվագախմբի առաջին ջութակների կոնցերտմեյստերը։ Որովհետև նվագախմբում նվագող ուսանողների թիվը փոքր էր և, բացի այդ, նրանցից շատերը չունեին նվագելու փորձ, ուստի նվագախմբի կազմը համալրվում էր բոլոր այն դասատուներով, որոնք նվագում էին լարային կամ փողային գործիքների վրա։

Սիմֆոնիկ նվագախմբի կազմակերպման և նրա հետագա զարգացման գործում չափազանց մեծ դեր խաղաց Ալեքսանդր Սպենդիարյանը, որը երաժշտագետ Վ. Դ. Ղորղանյանի հետ միասին համարվում էր Կոնսերվատորիայի կոնսուլտանտ և մանում Կոնսերվատորիայի գեղարվեստական խորհրդի կազմի մեջ։

Ուսանողության երաժշտական մտահորիզոնը էլ ավելի ընդլայնելու և հատկապես կվարտետային երաժշտության հետ ծանոթացնելու նպատակով, այդ նույն 1924 թ. դասատուների ուժերով կազմակերպվում է Հայաստանում առաջին լարային կվարտետը հետևյալ կազմով՝ առաջին ջութակ—Դավիթ Սոգոմոնյան, երկրորդ ջութակ—Հովհաննես Հովհաննիսյան, ալտ—Անդրեյ Կոտլյարևսկի և թավջութակ—Արտեմի Այվազյան։ Այդ կվարտետը համարյա ամեն շաբաթ ելույթներ էր ունենում նաև ուսանողության համար։ Բացի այն, որ կարճ ժամանակամիջոցում ուսանողություններ ծանոթացավ Բորոդինի, Չայկովսկու, Գլազունովի, Մոցարտ, Բեթհովենի, Շուբերտի և մի շարք այլ կոմպոզիտորների կվարտետների հետ,— լարային գործիքների բաժնի ուսումնական պլանում մրցրվեց կվարտետում նվագելը, որպես պարտադիր առարկա։

1924—1925 ուսումնական տարվանից Կոնսերվատորիայում բացվում է նաև օպերային դասարան, որի աշխատանքներն առանձնապես աշխուժանում են 1926—1927 ուս. տարում, երբ Կոնսերվատորիայի դիրեկտոր է նշանակվում կոմպոզիտոր Ա. Գ. Տեր-Ղևոնդյանը։ Այդ ժամանակ օպերային դասարանը (որտեղ բեմական արվեստ առարկան դասավանդում էր Սրբուհի Լիսիցյանը) պատրաստում էր հատվածներ ռուսական և արևմտաեվրոպական կոմպոզիտորների օպերաներից (Վերդի—«Աիդա», Գունո—«Ֆաուստ», Ռուբինշտեյն—«Դև», Չայկովսկի—«Եվգենի Օնեգին»)։ Այդ հատվածների բեմադրությունը հանձնարարված էր ռեժիսյոր Արշակ Բուրջալյանին։ 1927 թ. մայիսի 18-ին կայացավ օպերային դասարանի առաջին ելույթը, որին մասնակցում էր նաև Թբիլիսիի օպերային թատրոնի ականավոր մենակատար Լևոն Իսեցկի-Հովհաննիսյանը (բաս)։ Օպերային հատվածների ներկայացումը (դեկորներով, գրիմով ու կոստյումներով) ունկնդրող հասարակության վրա թողեց շատ ուժեղ տպավորություն։ Ալ. Սպենդիարյանը, որը նույնպես ներկա էր այդ ներկայացմանը «Չարյա Վոստոկա» թերթում զետեղված իր հոդվածում գրում էր. «1927 թ. մայիսի 18-ին դրվեց ապագա հայկական օպերայի հիմքը»։

1930 թ. օպերային դասարանը վերածվում օպերային ստուդիայի, իսկ 1933 թ., հենվելով Կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և օպերային ստուդիայի վրա, հնարավոր եղավ հիմնադրել ներկայումս Ալ. Սպենդիարյանի անունը կրող օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնը։

1929 թ. Մոսկվայից Երևան է հրավիրվում դիրիժոր Գ. Ե. Բուդաղյանը, որը երկար տարիներ ղեկավարում էր Կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախումբը, օպերային և կամերային երգեցողության դասարանները և վարում գիտական և ուսումնական գծով դիրեկտորի տեղակալի պաշտոնը (այժմ ժողովրդական արտիստ, երաժշտության պատմության ու տեսության և կոմպոզիցիայի ամբիոնի պրոֆեսոր)։

Սովետահայ երաժշտական կուլտուրայի հետագա զարգացման համար խոշոր նշանակություն ունեցավ մեր կոնսերվատորիայում կոմպոզիտորական ֆակուլտետի բացումը (1930)։ Այդ գործում մեծ դեր են խաղացել կոմպոզիտորներ Հարո Ստեփանյանը, պրոֆեսոր Սարգիս Բարխուդարյանը և դոցենտ Վարդգես Տալյանը, որի մոտ երկար տարիներ ուսանել ու ավարտել են մի շարք կոմպոզիտորներ, որոնց թվում՝ Աշոտ Սպթյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Առնո Բաբաջանյանը, Էդուարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը և ուրիշներ։

1935 թ. Երևանի կոնսերվատորիա էր տեղափոխվել Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր, սովետական ականավոր դիրիժոր, հետագայում ժողովրդական արտիստ Կոստանդին Սարաջյանը (Սարաջև), որը երկար տարիների ընթացքում և մինչև իր կյանքի վերջը մանկավարժական աշխատանքից բացի գրավում էր Կոնսերվատորիայի դիրեկտորի պաշտոնը։ Դա հնարավորություն տվեց բացել նաև օպերային ու սիմֆոնիկ դիրիժորության դասարան։ Կ. Ս. Սարաջյանի մոտ սովորել ու ավարտել են բավական մեծ թվով դիրիժորներ, որոնց թվում արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ստեփանյանը, Արամ Քաթանյանը, Հակոբ Ոսկանյանը, Յուրի Դավթյանը (որոնք այժմ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի Պետական ակադեմիական թատրոնի դիրիժորներն են), վաստակավոր արտիստ Գրիգոր Վարժապետյանը

(Երաժշտական կոմեդիայի թատրոնի նախկին գլխավոր դիրիժոր), Անդրանիկ Սողոմոնյանը (Զայկովսկու անվան երաժշտական տասնամյակի դիրիժոր), Գոհար Հարությունյանը (Մ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դիրիժոր), Արտաշես Եղիազարյանը (Մոսկվայի Վ. Վ. Մայակովսկու անվան դրամատիկ թատրոնի դիրիժոր), Ալֆրեդ Կոպիլովը (Նովոսիբիրսկի օպերային թատրոնի դիրիժոր), Գուրգեն Կարապետյանը (Կույբիշևի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր) և ուրիշներ։

1930-ական թվականներին Երևանի կոնսերվատորիայում աշխատելու են հրավիրվում երգչուհիներ Հայկանուշ Դանիելյանը (հետագայում ՍՍՌՄ ժողովրդական արտիստ), Ելենա Կագարյանը, ջութակահար-պրոֆեսոր Դիմիտրի Լեգկերը, փողհար Գուգուշ Թառայանը, կոմպոզիտոր և խմբավար Կարո Զարարյանը (այժմ ժողովրդական արտիստ, խմբավարության ամբիոնի դոցենտ), թավջութակահար Կոստանդին Խիզանյանը, ֆլեյտիստ Հայկ Ղասաբյանը (այժմ վոկալային գործիքների ամբիոնի վարիչ, պրոֆեսորի պաշտոնակատար), վաստակավոր արտիստ, հորդիստ Սուրեն Ասայանը (օպերային թատրոնի առաջին հորդ, դոցենտի պաշտոնակատար) և ուրիշներ։

1934 թ. Կոնսերվատորիային կից կազմակերպվեց երաժշտական գիտա-հետազոտական կաբինետ, որը հիմնականում զբաղվում էր հայկական երաժշտական կուլտուրայի պատմության ու տեսության խնդիրներով։ Երաժշտական կաբինետը, որին հետագայում Ռոմանոս Մելիքյանի անունը շնորհվեց և որի աշխատանքները ղեկավարում էր կոմպոզիտոր-երաժշտագետ Արամ Քոչարյանը, 1937 թ. գիտաշրջավ կազմակերպեց Շամշադինի շրջանի երաժշտական կենցաղը, երաժշտական գործիքներն ու երաժշտությունն ուսումնասիրելու նպատակով։ Պետք է ասել, որ այդ էքսպեդիցիայի հավաքած նյութերը գիտական մեծ արժեք են ներկայացնում։

Մի քանի տարում Կոնսերվատորիայի գիտա-հետազոտական երաժշտական կաբինետը այնքան աճեց, որ 1938 թ. անջատվեց Կոնսերվատորիայից և ինքնուրույն հաստատություն դարձավ, 1944 թ. վերակազմվելով Հայկական ՍՍՌ ԳԱ Երաժշտության պատմության ու տեսության սեկտորի (1958 թ.՝ Հայկական ՍՍՌ ԳԱ Արվեստի ինստիտուտ)։

1935 և 1936 թթ. երգիչ-երաժշտագետ Վարդան Համբարձումյանի դիրեկտորության օրոք, հրավիրվում են Լենինգրադի կոնսերվատորիան ավարտած, Երևանի կոնսերվատորիայի նախկին սաներ Թաթուլ Ալթունյանը՝ որպես խմբավար և հորդի դասատու, Զավեն Վարդանյանը որպես կլարնետի և երաժշտության պատմության դասատու, Կոնստանդին Մելիք-Վրթանեսյանը որպես երաժշտության պատմական և տեսական առարկաների դասատու։

1938 թ. Սամսոն Գասպարյանի դիրեկտորության օրոք, բացվեց պատմա-տեսական (երաժշտագիտական) ֆակուլտետը, որը խոշոր նշանակություն ունեցավ թե ռեսպուբլիկայի միջնակարգ ու ոչ լրիվ միջնակարգ երաժշտական ուսումնական հաստատությունների երաժշտության տեսական ու պատմական առարկաների դասատուների պատրաստման, թե երաժշտագիտական կադրերի աճեցման և թե, ընդհանրապես, սովետահայ երաժշտագիտության զարգացման գործում։ Այժմ Կոնսերվատորիայի երաժշտության պատմության, տեսության ու կոմպոզիցիայի ամբիոնում ընդգրկված 17 դասատուներից 10-ը Կոնսերվատորիայի նախկին սաներն են, որոնցից 6-ը ավարտել են պատմա-տեսական ֆակուլտետը (դրանցից հինգը արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ունեն, իսկ երեքը դոցենտի կոչում)։

Դաշնամուրային ֆակուլտետի գծով 1937 և 1938 թթ. հրավիրվում են Լենինգրադի կոնսերվատորիայի շրջանավարտներ՝ դաշնակահարներ Ալեքսանդր Դոլուխանյանը և Թորերա Անդրեասյանը (այժմ դաշնամուրային ամբիոնի վարիչ, պրոֆեսորի պաշտոնակատար)։

1940 թ. փետրվար ամսին հրավիրվում է ջութակահար Կարպ Ռոմբաևը, որը երկար տարիներ վարում էր գիտական և ուսումնական գծով դիրեկտորի տեղակալի պաշտոնը, իսկ հետագայում լարային գործիքների ամբիոնի վարիչի պարտականությունները (այժմ արվեստի վաստակավոր գործիչ, լարային գործիքների ամբիոնի պրոֆեսոր)։ Այդ նույն թվականին հրավիրվում է նաև Լենինգրադի կոնսերվատորիայի շրջանավարտ, տեսաբան Սերգեյ Կոպաևը (այժմ երաժշտության պատմության, տեսության ու կոմպոզիցիայի ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու)։

Կոնսերվատորիայի դասախոսական կազմը և ուսանողությունը Հայրենական Մեծ պատերազմի օրերին ցուցաբերեցին իրենց հայրենասիրական բարձր զգացումները։ Պատերազմի հենց առաջին օրերին Կարմիր Բանակի շարքերն անցան մի շարք տաղանդավոր ուսանողներ ու դասատուներ։ Մենեջմենտության ամբիոնի դասատու Հեղինե Մուսինյանը և մի շարք ուսանողուհիներ ու աշխատակցուհիներ մտան բուժքույրերի կուրսեր և ավարտելով՝ գնացին աշխատելու զինվորական հիվանդանոցներում։

Պատերազմի տարիներին Կոնսերվատորիայի ուսանողությունն ու դասախոսական կազմը հրաբկայական բանակությամբ շեֆական համերգներ են տվել զինվորական հիվանդանոցներում և զորամասերում։

Ռազմաճակատ մեկնած ուսանողներից մի քանիսը ընկան հերոսի մահով։ Նրանց հիշատակը հավերժացնելու համար, Կոնսերվատորիայում փակցված է մարմարյա հուշատախտակ, որի վրա ոսկե տառերով փորագրված է՝

Հավերժ փառք 1941—1945 թթ. մեր Հայրենիքի ազատության և անկախության համար զոհված ներքոհիշյալ ուսանող-մարտիկներին, որոնք սովորել են Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայում՝

Խաչիկյան Պարույր
Եգրաիլով Վալենտին
Զալայրեկյան Գագիկ
Ռամազյան Սիմակ
Մեհրաբյան Ռաֆիկ

Պատերազմի տարիներին Կոնսերվատորիայի դասախոսական կազմը համալրվեց դասատուների մի նոր խմբով։ Որանցից պետք է նշել ականավոր սովետական դաշնակահար, Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Կ. Ա. Բգումնովին, որը խոշոր աշխատանք կատարեց դաշնամուրային ֆակուլտետի ամրապնդման ու հետագա զարգացման գործում, Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆեսոր, ականավոր սովետական երաժշտագետ-տեսաբան Քրիստոֆոր Քուշնարյանին և երաժշտության պատմության ու տեսության երիտասարդ մասնագետները՝ երաժշտագետ Գ. Գ. Տիգրանյանին ու կոմպոզիտոր Տ. Գ. Տեր-Մարտիրոսյանին, որոնք զգալի կերպով աշխուժացրին պատմա-տեսական (երաժշտագիտական) և կոմպոզիտորական ֆակուլտետների ուսումնական աշխատանքները։

Այդ տարիներին է, որ Կոնսերվատորիայի ուսումնական պլանների մեջ մտցվում է հայկական երաժշտության պատմության դասընթացը։

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, Երևանի կոնսերվատորիայի ողջ կոլեկտիվը, Սովետական Միության կուլտուրայի ֆրոնտի և մասնավորապես երաժշտական ֆրոնտի բոլոր աշխատողների հետ միասին, լծվում է աշխարհի ամենաառաջավոր՝ սոցիալիստական երաժշտական կուլտուրայի հետագա զարգացման մեծ աշխատանքներին։ Գիտական գծով ուսումնասիրության հիմնական առարկան դարձավ հայկական երաժշտությունը, իր բազմաթիվ պատմական ու տեսական խնդիրներով։ Կատարողական գծով հիմնական շեշտը դրվեց սովետական կոմպոզիտորների երաժշտական նոր ստեղծագործությունների կատարման վրա։ Ստեղծվեցին դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, մշակվեցին ծրագրեր այն առարկաների համար, որոնք դասավանդվում են միայն մեր Կոնսերվատորիայում։

Երևանի կոնսերվատորիայի գրադարանը, որը տարեցտարի համալրվում է նորանոր երաժշտական, երաժշտագիտական ու այլ գրականությամբ, հանդիսանում է մեր ռեսպուբլիկայի ամենախոշոր ու հարուստ երաժշտական գրադարանը։ Բացի Կոնսերվատորիայի ուսանողներից ու դասախոսներից, այդ գրադարանից օգտվում են նաև Հայֆիլհարմոնիան, օպերային թատրոնը և մի շարք այլ երաժշտական ուսումնական հաստատություններ։

1939 և 1956 թթ. Մոսկվայում տեղի ունեցած հայկական գրականության ու արվեստի տասնօրյակներին Կոնսերվատորիան շատ մեծ մասնակցություն է ունեցել։ Այդ տասնօրյակների երաժիշտ մասնակիցների զգալի մասը եղել են կամ Կոնսերվատորիայի ուսանողները, կամ նախկին սաները և կամ դասատուները։

Կոնսերվատորիայում 1938 թ. կազմակերպվեցին հետևյալ ամբիոնները. 1) Դաշնամուրի ամբիոն (ամբիոնի վարիչ դաշնակահար-պրոֆեսոր Աննա Մնացականյան), 2) Օրկեստրային գործիքների ամբիոն (ամբիոնի վարիչ ջութակահար-պրոֆեսոր Դիմիտրի Լեգկեր), 3) Կոմպոզիցիայի ամբիոն (ամբիոնի վարիչ կոմպոզիտոր - դոցենտ Վարդգես Տալյան), 4) Դիրիժորության ամբիոն (ամբիոնի վարիչ դիրիժոր - պրոֆեսոր Կոստանդին Սարաջև) 5) Մենակատարության ամբիոն (ամբիոնի վարիչ՝ երգչուհի, պրոֆեսոր Նադեժդա Կարգյան), 6) Երաժշտության պատմության ու տեսության ամբիոն (ամբիոնի վարիչ՝ պրոֆեսորի պաշտոնակատար Կոստանդին Մելիք-Վրթանեսյան), 7) Ընդհանուր դաշնամուրի ամբիոն (ամբիոնի վարիչ՝ դոցենտի պաշտոնակատար Ալեքսանդր Բոլուխանյան)։

Այդ ժամանակ Կոնսերվատորիան ուներ հինգ ֆակուլտետ դաշնամուրային, օրկեստրային, մենակատարության, կոմպոզիտորական և դիրիժորական։

Ներկայումս Կոնսերվատորիան ունի հետևյալ ֆակուլտետները իրենց բաժիններով, ամբիոններով ու մասնագիտություններով։

1. Տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետը երկու բաժիններով՝ երաժշտագիտական և կոմպոզիտորական։ Ֆակուլտետը տալիս է երեք մասնագիտացում՝ երաժշտագետ-տեսաբանի, երաժշտագետ-պատմաբանի և կոմպոզիտորի։ Ֆակուլտետն ունի մեկ ամբիոն՝ երաժշտության պատմության տեսության ու կոմպոզիցիայի,

որն ընդգրկում է՝ 1) հայկական երաժշտության պատմություն և երաժշտական գրականություն, 2) ռուսական երաժշտության պատմություն և երաժշտական գրականություն, 3) արտասահմանյան երաժշտության պատմություն և երաժշտական գրականություն, 4) ՍՍՌՄ ժողովուրդների երաժշտության պատմություն և երաժշտական գրականություն, 5) սովետական երաժշտության պատմություն և երաժշտական գրականություն, 6) հայկական ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, 7) սոլֆեջիո, 8) հարմոնիա, 9) պոլիֆոնիա, 10) գործիքագիտություն, գործիքավորում և պարտիտուրաների անալիզ, 11) պարտիտուրաների ընթերցում, 12) երաժշտական ստեղծագործությունների անալիզ, 13) կոմպոզիցիա, 14) երաժշտության պատմության ու տեսության դասավանդման մեթոդիկա, 15) մանկավարժական պրակտիկա և մի շարք այլ առարկաներ։

2. Օրկեստրային ֆակուլտետ երկու բաժիններով՝ լարային գործիքների և փողային գործիքների։ Լարային բաժին ունի ջութակի, ալտի, թավջութակի և կոնտրաբասի դասարաններ, որտեղ պատրաստում են մենակատարներ, անսամբլային կատարողներ, սիմֆոնիկ նվագախմբի արտիստներ և այդ գործիքների վրա նվագել սովորեցնող դասատուներ, իսկ փողային բաժին ունի փայտյա փողային գործիքների (ֆլեյտայի, հոբոյի, կլարնետի, ֆագոտի), պղնձյա փողային գործիքների (վալտորնայի, տրուբայի, տրոմբոնի, տուբայի) և հարվածային գործիքների (կսիլոֆոն, լիտավրաներ, մեծ ու փոքր թմբուկներ և այլն) դասարաններ, որտեղ հիմնականում պատրաստվում են սիմֆոնիկ նվագախմբի մենակատարներ, արտիստներ ու դասատուներ։ Ֆակուլտետն ունի երկու ամբիոն՝ լարային գործիքների և փողային գործիքների (որի մեջ մտնում են նաև հարվածային գործիքները)։ Լարային գործիքների ամբիոնը, բացի մասնագիտություններից, ընդգրկում է 1) կամերային անսամբլ, 2) կվարտետ, 3) օրկեստր, 4) լարային գործիքների դասավանդման մեթոդիկա, 5) լարային գործիքների պատմությունն ու տեսությունը, և մի շարք այլ առարկաներ։ Փողային ամբիոնը, բացի մասնագիտություններից, ընդգրկում է 1) կամերային անսամբլ, 2) օրկեստր, 3) փողային գործիքների դասավանդման մեթոդիկա և այլ առարկաներ։

3. Դաշնամուրային ֆակուլտետ, որտեղ պատրաստվում են մենակատար-դաշնակահարներ, անսամբլային կատարողներ, կոնցերտմեյստերներ և դաշնամուրի դասատուներ։ Ֆակուլտետն ունի մեկ ամբիոն (դաշնամուրի), որը բացի մասնագիտությունից ընդգրկում է 1) կամերային անսամբլ, 2) նվագակցում, 3) կոնցերտմեյստերություն, 4) դաշնակահարության պատմություն ու տեսություն, 5) դաշնամուրի դասավանդման մեթոդիկա և այլ առարկաներ։

4. Մենակատարության ֆակուլտետ, որն ունի երկու մասնագիտացում՝ օպերային երգեցողություն և կամերային երգեցողություն։ Ֆակուլտետն ունի մեկ ամբիոն (մենակատարության), որը բացի մասնագիտությունից ընդգրկում է՝ 1) դերասանական վարպետության հիմունքները, 2) բեմական շարժման հիմունքները, 3) պար, 4) գրիմ, 5) երգեցողության մեթոդիկայի հիմունքները և այլ առարկաներ։

5. Խմբավարական ֆակուլտետ երկու բաժիններով՝ խմբավարական և մանկավարժական։ Խմբավարական բաժին պատրաստում է պրոֆեսիոնալ և ինքնագործ երգչախմբերի ու անսամբլների ղեկավարներ, իսկ մանկավարժական բաժին՝ բարձրորակ մասնագետներ մասսայական դպրոցներում երաժշտական կրթության ու դաստիարակության գործը գլխավորելու համար։ Ֆակուլտետն ունի մեկ ամբիոն (խմբավարական), որն ընդգրկում է՝ 1) խմբավարություն, 2) երգեցիկ խումբ, 3) մանկավարժություն, 4) երաժշտական դաստիարակության և կրթության մեթոդիկա, և մի շարք այլ առարկաներ։

Ֆակուլտետների կազմի մեջ մտնող մասնագիտական ամբիոններից բացի, կան նաև ընդհանուր ամբիոններ, ինչպիսիք են՝ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների և ընդհանուր դաշնամուրի ամբիոնները։

1930—1931 ուսումնական տարում, երբ Կոնսերվատորիայում միավորված էին երաժշտական բանֆակը, երաժշտական տեխնիկումը և երաժշտական բուհը, ուսանողության թիվը հասնում էր 275 հոգու, որոնցից 65-ը սովորում էին բանֆակում, 175-ը՝ տեխնիկումում և միայն 35-ը՝ Կոնսերվատորիայում։ Այդ ուսումնական տարում թված երեք երաժշտական ուսումնական հաստատությունները միասին ունեին 37 դասատու։

Շուտով բանֆակը ձուլվում է տեխնիկումի հետ, որը 1939 թ. բոլորովին անջատվում է Կոնսերվատորիայից և այժմ կրում է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան անունը (իրավաբանորեն տեխնիկումը անջատված էր Կոնսերվատորիայից շատ ավելի առաջ)։

1935—1936 ուսումնական տարում Կոնսերվատորիայում կազմակերպվում է շնորհալի երեխաների խումբ, ուր առաջին տարին ընդուն-

վում է տասնմեկ երեխա։ Այդ երեխաների խումբը 1940 թ. անջատվելով Կոնսերվատորիայից անվանվում է Երաժշտական տասնամյակ։ Այժմ նա կրում է Երևանի Պ. Ի. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ դպրոց անունը։

1938—1939 ուսումնական տարում Կոնսերվատորիայի ուսանողության թիվը (շնորհալի երեխաների խմբի հետ միասին) արդեն հասնում էր 150-ի, որից 101-ը՝ Կոնսերվատորիայի ուսանողներ, իսկ 49-ը՝ երեխաներ։

Կոնսերվատորիայի ուսանողների և շնորհալի երեխաների թիվը ըստ ֆակուլտետների 1938—1939 ուս. տարում ուներ հետևյալ պատկերը։

Ֆակուլտետ, բաժին	Կոնսերվատորիա	Շնորհալի երեխաների խումբ	Ընդամենը
Դաշնամուրային ֆակուլտետ	28	23	51
Օրկեստրային ֆակուլտետի լարային բաժին	11	22	33
Օրկեստրային ֆակուլտետի փողային բաժին	7	2	9
Դիրիժորական ֆակուլտետ	5	—	5
Կոմպոզիտորական ֆակուլտետ	13	2	15
Պատմա-տեսական ֆակուլտետ	8		8
Մեներգեցողության ֆակուլտետ	29		29
	101	49	150

Տարեցտարի ավելանում է Կոնսերվատորիայի ուսանողության ու դասախոսների թիվը։ Այժմ միայն Կոնսերվատորիայում ուսանում են 331 ուսանող, որոնցից 232-ը ցերեկային բաժնում, իսկ 99-ը՝ հեռակա բաժնում, որը կազմակերպվել է 1957—1958 ուսումնական տարում։ Պլանավորված է 1961—1962 ուսումնական տարում Կոնսերվատորիայում բացել նաև երեկոյան բաժին։

Կոնսերվատորիայի ուսանողների թիվը ըստ ֆակուլտետների, բաժինների ու կուրսերի 1960—1961 ուսումնական տարում հետևյալ պատկերն ունի։

Ցերեկային բաժնում

Ֆակուլտետներ, բաժիններ	Նախապատրաստական դասարան	I կ.	II կ.	III կ.	IV կ.	V կ.	Ընդամենը
Դաշնամուրային	—	10	8	12	14	21	65
Օրկեստրային ֆակուլտետի լարային բաժին	—	12	8	8	10	9	47
Օրկեստրային ֆակուլտետի փողային բաժին	—	5	1	5	5	2	18
Մեներգեցողություն	10	7	8	2	3	5	35
Խմբավարական	—	5	5	8	3	2	23
Խմբավարական ֆակուլտետի մանկավարժական բաժին	—	7	—	—	—	—	7
Տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետի կոմպոզիտորական բաժին	—	2	4	—	4	6	16
Տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետի երաժշտագիտական բաժին		4	2	2	5	8	21
Ընդամենը	10	52	36	37	44	53	232

Հեռակա բաժնում

Ֆակուլտետներ, բաժիններ	I կ.	II կ.	III կ.	IV կ.	Ընդամենը
Դաշնամուրային	18	22	9	7	56
Օրկեստրային ֆակուլտետի լարային բաժին	1	14	2	2	19
Օրկեստրային ֆակուլտետի փողային բաժին	1	1	2	1	5
Խմբավարական	3	4	2	1	10
Տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետի կոմպոզիտորական բաժին	—	3	3	—	3
Տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետի երաժշտագիտական բաժին	1	2	2	1	6
Ընդամենը	24	46	17	12	99

1938—1939 ուս. տարում կոնսերվատորիան ու շնորհալի երեխաների խումբը միասին ունեին 40 դասատու, իսկ այժմ կոնսերվատորիայում աշխատում են 94 դասախոսներ, այդ թվում՝ 7 պրոֆեսոր, 25 դոցենտ, արվեստագիտության մեկ դոկտոր և 14 թեկնածու։ Այդ 94 դասախոսներից 54-ը Կոնսերվատորիայի նախկին սաներ են։

Իր գոյության 37 տարիների ընթացքում Երևանի պետական կոնսերվատորիայում ուսանել ու ավարտել է 713 մարդ։

1934 թվականից մինչև 1960 թվականը մեր Կոնսերվատորիան ավարտել են 588 մարդ, որոնցից՝

Դաշնամուրային ֆակուլտետը	161	մարդ
Օրկեստրային ֆակուլտետի լարային բաժինը	140	»
Օրկեստրային ֆակուլտետի փողային բաժինը	54	»
Ազգերգեցողության ֆակուլտետը	77	»
Խմբավարական ֆակուլտետը	42	»
Դիրիժորական ֆակուլտետը	15	»
Երաժշտագիտական ֆակուլտետը	59	»
Կոմպոզիտորական ֆակուլտետը	37	»
Մանկավարժական ֆակուլտետը	3	»

Այժմ մեր ռեսպուբլիկայի բառասունից ավելի երաժշտական ուսումնական հաստատությունների դեկավար կազմն ու դասատուները հիմնականում Կոնսերվատորիայի շրջանավարտներն են։ Ակ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի, Երաժշտական կոմեդիայի թատրոնի, Հայֆիլհարմոնիայի մենակատարները, դիրիժորները, խմբավարները, երգչախմբերի ու սիմֆոնիկ նվագախմբերի արտիստները և դեկավար կազմը նույնպես հիմնականում կոմպլեկտավորված են Կոնսերվատորիայի շրջանավարտներից։ Կոնսերվատորիայի շրջանավարտներից շատերը աշխատում են նաև Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում։

Կոնսերվատորիայի նախկին սաներից ու շրջանավարտներից Ստալինյան մրցանակի լաուրեատի բարձր կոչման են արժանացել հետևյալ հինգ արվեստագետները՝ կոմպոզիտորներ Աշոտ Սաթյան, Առնո Բաբաջանյան, Ալեքսանդր Հարությունյան, ժողովրդական արտիստներ՝ Թաթուլ Ալթունյան և Ավագ Պետրոսյան։ Միջազգային, համամիութենական և Անդրկովկասյան մրցանակաբաշխությունների ու ֆեստիվալների լաուրեատի կոչման են արժանացել մոտ 29 կատարողներ ու կոմպոզիտորներ։

Կոնսերվատորիայի շրջանավարտներից են՝ կոմպոզիտորներ Ա. Խուդոյանը, Է. Հովհաննիսյանը, Գ. Չթչյանը, Ս. Ջրբաշյանը, Ա. Մելրանգուլյանը, Է. Բաղդասարյանը, Գ. Արմենյանը, երաժշտագետներ՝ Ռ. Ախթայանը, Մ. Մուրադյանը, Մ. Հարությունյանը, Ա. Բարսամյանը և շատ ուրիշներ։ Ներկայումս Կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնում են ուսանում և 1961 թ. ավարտելու են կոմպոզիտորներ Ջիվան Տեր-Թադևոսյանը և Կոնստանդին Օրբելյանը, որոնք իրենց ստեղծագործություններով արդեն գրավել են Սովետական Միության երաժշտական հասարակայնության ուշադրությունը։

Կոմիտասի անվան Կոնսերվատորիայի նվաճումները զգալի չափով պայմանավորված են ռուսական առաջավոր երաժշտական կուլտուրայի բարերար ազդեցությամբ և Մոսկվայի ու Լենինգրադի կոնսերվատորիաների անմիջական օգնությամբ, որոնց հետ սերտ կապ է պահպանվում։ Կապեր են հաստատված նաև Թբիլիսիի, Բաքվի և Կիևի պետական կոնսերվատորիաների հետ։

Կ. ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

1920 թ. դեկտեմբերի 17-ին, Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվելուց ընդամենը 18 օր հետո, Երևանում բացվեց ժողովրդական (հետագայում Պետական) համալսարանը։ Նրա առաջին ռեկտոր նշանակվեց ականավոր հայագետ, բազմավաստակ պատմաբան Հակոբ Մանանդյանը։

Կարճ ժամանակից հետո համալսարանում կազմակերպվեցին մի շարք ֆակուլտետներ, որոնց թվում և բժշկական ֆակուլտետը, որը բացվեց 1922 թ. մարտի 15-ին։ Նրա առաջին դեկան նշանակվեց բժ. Սպանդարյան Կամսարականը։ Ֆակուլտետի հիմնադրման գործում մեծ վաստակ ունեն նաև Հայաստանի առողջա-